# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**01.07.2015թ. – 01.10.2015թ. ընկած ժամանկահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները**

Դիլիջան համայնքի 2015թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը:

2015թ. Երրորդ եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 335945,5 հազ.դրամի եկամուտ:Հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների հավաքագրումը կազմել է 97 տոկոս, ինչը հնարավորություն է տալիս համայնքում իրականացնել մեծածավալ աշխատանքներ:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը 01.10.2015թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Տարվա ճշտված պլան (հազ.դրամ) | Սեպտեմբերի պլանը աճողական տեսքով (հազ.դրամ) | Սեպտեմբերի կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ) | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 488914.50 | 347225.79 | 335945.50 | 96.75% |
| 1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ | 52440.60 | 29311.20 | 27765.08 | 94.73% |
| 1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ | 34679.40 | 22000.00 | 22409.11 | 101.86% |
| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 14902.00 | 12842.00 | 11160.77 | 86.91% |
| ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 4500.00 | 3400.00 | 2907.80 | 85.52% |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 309484.80 | 228487.20 | 228487.20 | 100.00% |
| 3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 31500.00 | 22000.00 | 17262.43 | 78.47% |
| ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ | 3407.70 | 2385.39 | 2385.39 | 100.00% |
| 3.5 ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ | 37500.00 | 26500.00 | 22767.72 | 85.92% |
| 3.6 ՄՈՒՏՔԵՐ | 500.00 | 300.00 | 800.00 | 266.67% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 488914.50 | 347225.79 | 335945.50 | 96.75% |

**Դիլիջան համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը 01.10.2015թ. դրությամբ**

| Ծախսատեսակ / Հիմնարկ | Տարվա պլանը (դրամ) | Ամսվա պլանը (դրամ) | Փաստացի ծախսը (դրամ)) |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 931791003.00 | 706102293.00 | 553162721.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում) | 71375000.00 | 53762500.00 | 40672731.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակույթային կազմակերպություններ) | 9494766.00 | 7933766.00 | 7637098.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպրոցական դաստիարակություն) | 68685028.00 | 55622728.00 | 45697061.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ) | 8274168.00 | 6279168.00 | 5637000.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն) | 150200000.00 | 144515246.00 | 118668247.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գյուղական խորհրդատվական ծառայություն) | 60000.00 | 60000.00 | 30000.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ) | 22822134.00 | 17347134.00 | 16087908.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան) | 121484394.00 | 83609894.00 | 75662143.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Զբոսաշրջություն) | 5000000.00 | 5000000.00 | 2008500.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի այլ ծառայություններ) | 3753300.00 | 2644590.00 | 2378809.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ) | 3363150.00 | 2921150.00 | 2567150.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ) | 4000000.00 | 3000000.00 | 2150000.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ) | 28659180.00 | 25329180.00 | 15328347.00 |

| | | | |
|---|---|---|---|
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ) | 1727900.00 | 1727900.00 | 1727900.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգիստ, մշակույթ և կրոն) | 3004152.00 | 3004152.00 | 0.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգստի և սպորտի ծառայություններ) | 950000.00 | 950000.00 | 949872.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում) | 992992.00 | 992992.00 | 827493.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ) | 342000.00 | 256500.00 | 227992.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ) | 161401253.00 | 90401253.00 | 67373980.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տներ, ակումբներ) | 23661985.00 | 17725985.00 | 17465062.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն) | 125822444.00 | 94902444.00 | 90235750.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Շրջակա միջ.պաշտպանություն) | 8000000.00 | 8000000.00 | 6975340.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ) | 2480000.00 | 1860000.00 | 1857400.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ) | 14195934.00 | 29734.00 | 0.00 |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում) | 44500000.00 | 36000000.00 | 30786938.00 |

## Սոցիալական ծրագրերի իրականացում

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, 20 ընտանիքի տրվել է դրամական օգնություն:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 35 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:

Դիլիջան քաղաքից 2015թ. ամառային զորակոչով ՀՀ Զինված ուժերում ծառայության մեկնող թվով 70 զորակոչիկների տրվել է նվերներ:

## Մշակութային-կրթական ծրագրերի իրականացում

Մանկապարտեզ հաճախող ավագ խմբերի երեխաների համար , որոնք հրաժեշտ են տալիս մանկապարտեզին կազմակերպվեց <Հրաժեշտի ժամ> տոնական հանդես, 203 երեխաների տրվեցին նվերներ:
Դիլիջան քաղաքի դպրոցների առաջին դասարան հաճախող թվով 220 երեխաների համար սեպտեմբերի 1-ի կապակցությամբ ձեռք են բերվել և տրամադրվել նվերներ:
Դիլիջանում կոմպոզիտորների տան Բեթհովենի անվան համերգասրահում անցկացվեց « Մշակութային վերածնունդ » ավանդական փառատոնը: Այստեղ ներկայացված էին դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ Հայաստանի բոլոր մարզերից և Արցախից :
Քաղաքի դպրոցներում և կրթական մյուս հաստատություններում հանդիսավորությամբ նշվեց Հայաստանի անկախության 24-ամյակը: Կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ նվիրված Հայաստանի նորօրյա պատմությանը, Արցախյան ազատամարտին, հարգանքի տուրք մատուցվեց Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակին:

## Կոմունալ-բնակարանային և քաղաքային ծրագրերի իրականացում

Շարունակվում են Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի 8 բնակելի շենքերի աստիճանավանդակների վերակառուցման և Շամախյան թաղամասի բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների և սրահների հիմնանորոգման աշխատանքները:
Ավարտվել են ներհամայնքային նշանակության Մոլդովական 18/6 հասցեի հարակից ավտոճանապարհի և Մոլդովական 49 հասցեից մինչև Վ.Անանյանի անվան դպրոց ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքները:
Կատարվել է Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Գետափնյա, Մյասնիկյան, Շահումյան և Սայաթ-Նովա փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի մասնակի փոսային նորոգման աշխատանքներ:Նշագծվել են Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Մյասնիկյան, Շահումյան,Կալինինի փողոցների, քաղաքային շուկայի ոլորապտույտի հետիոտնի համար նախատեսված անցուղիները:
Նորոգվել և վերակառուցվել են Մյասնիկյան փողոցին հարակից ճարտարապետական տարրերը:Սկսվել են Դիլիջան համայնքի հասարակական տրանսպորտի կանգառների արդիականացման և վերակառուցման աշխատանքներ::
Դիլիջան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները առավել արդյունավետ և ժամանակին կատարելու նպատակով ձեռք են բերվել և քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվել թվով 30

կենցաղային աղբամաններ: Դիլիջան քաղաքի օրվան նվիրված միջոցառումներին ընդառաջ կազմակերպվել է համաքաղաքային սանիտարական մաքրման և բարեկարգման շաբաթօրյակ:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

10/6/2015

X